

կը զգամ սարսուղ վերջալոյսին մէջէն սեւ,  
Մ' եծ հոգինեղն ալ քեզի պէս հեւ ի հեւ  
Շըշեղութեանց պաշտամունքով կը մըխան:

Խակ դռն, ով գրոհ, երբ պիտի զաս հաղորդուիլ  
Կեանքին բիւրեղ դաշնակութեան հետ, կաթիւ  
Մ' ըմպել անոր մեղեղին տեւական...:

12 Յուղիս 1914

ԶԵՆՈԲ ԱՌԻՐԵՆԵԱՆ



Աըրինգներու քաղցըր հընչիւն մը մեղմիկ,  
Երկնի ու երկրի մէջէն անտես կը սահի.  
Ողինե՞ր են անոնք, եղան, թէ արդեօց  
Պիտի դեռ ըլլան...:

Հեշտ մոռացօնք մ' յոգնեցուցիչ մեր կեանքին,  
Խաղաղութեան տարժանելի մի հըծծիւն,  
Բերկրանքներու արցունք մը լոկ ըզգայուն  
Հոգւոյն կը տիրեն:

Ամենայն ինչ, մարդիկ, գազանք կը լըռեն,  
Մայրամուտն ալ կապոյտին մէջ կ'երփնէ վարդ,  
Կը մըրմընջին ալէծածան վեհ լեռներ,  
Ողջոյն քեզ Մարիամ...:

Ց. ՔԱՐՏՈՒԶՅԻ



Ա. Ռ. Ա. Ս. Ռ. Ն.

Խ Ա Կ Ա Բ Ա Ց Ի Ն զիշերուան մէջ՝ մէնաւո՞ր,  
Կը յառաջէ խաղաղ՝ նաւակն իմ հոգւոյս.  
Հո՞ն՝ արմոյն ասող, կը հեղնեն զիս ծիծաղկոտ,  
Քու սըրտիդ մէջ պահեն թագուն խորհուրդներ:  
Ինչո՞ւ այդպէս, աստղ պայծառ,  
Կը մըթագնիս երկնին մէջ: